որպէս նոյն ինքն ասէր 'ի յայտնութեան Յովհաննու. «Ես Յիսուս Քրիստոս առաքեմ զհրեշտակ իմ վկայել յամե_նայն եկեղեցիս. Ես եմ արմատ եւս և Դաւթի և Ադամայ, և աստղ առա_ւօտին, և Հոգին և փեսայն՝ որ գա_լոց եմ»։ Նոյն այն Մարգարէ զսա ինքն կոչէ արմատ. «պատմեցաք ասէ զնմանէ իբրև զմանուկ՝ իբրև զարմատ 'ի ծա_րաւուտ երկրէ»։

Շարունակելի.

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

### ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ահաւասիկ ս. Աթոռոյս Ուսումնա_կան Յանձնաժողովը Թեմական Դպրո_ցաց Կանոնադրութիւնն ևս աւարտած լինելով, կը փութամք հրատարակել սորև։

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ

### ՅԱՂԱԳՍ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՅՈՑ ՈՐ Ի ՌՈՒՍԱՍՏԱՆ.

Թեմական աւն այնոքիկ 'ի դպրոցաց, որք հաստատեալ են յԱռաջնորդանիստ տեղիս և 'ի գլխաւոր քաղաքս Ռուսաս_տանի վասն կրթելոյ յայլ և այլ հրա_հանգս ուսմանց զթերավարժ աշակերտս աւարտեալս զընթացս գիտութեանց 'ի Ծխական Դպրոցս։

### ԳԼՈՒԽ Ա.
### ՅԱՂԱԳՍ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԱՑ.

1) Թեմակալ Առաջնորդն համարի նա_խագահ Ընդհանուր ժողովոյ Հոգաբարձու_թեան։ Բարոյական զարգացումն Աշա_կերտաց և վերահասութիւն բարուք դա_սատուութե կրօնական գիտելեաց գլխա_ւորապէս կախին զնկատողութենէ Ա_ռաջնորդին։

2) Թեմակալ Առաջնորդն՝ վասն հա_ւատարիմ և արդիւնաւոր ծառայու_թեանց Հոգաբարձուաց ազգային Թե_մական Դպրոցաց առաջարկէ Ուսումնա_կան Յանձնաժողովոյ Էջմիածնի խնդ_րել 'ի Ն. Վեհափառ Կաթուղիկոսէ ամե_նայն Հայոց զարժանաւոր վարձատրու_թիւն։

3) 'Ի բացակայութեան Թեմակալ Ա_ռաջնորդին փոխանակէ զնա նոյն իրա_ւամբ Նախանդամն վիճակային Ատենին. իսկ յայլ քաղաքս Նախագահն Հոգևոր Կառավարութեան։

4) Թեմական Դպրոցն պարտի ունել զՀոգաբարձուս ոչ պակաս քան զչորս

Ծանօթ. Թէպէտ կանոնագրութիւնքս այսոքիկ խմբագրեցան իբրև ի հրահանգս կառավարութեան թեմական դպրոցաց, սակայն Թեմակալ Առաջնորդք և Հոգաբարձութիւնք ի նկատի ունելով զհանգա_մանս վիճակաց իւրեանց և զգրամական կարողու_թիւն, կարեն առնել բացառութիւնս ինչ, այլ հետևելով միշտ այնց յօգուտ այնոց որք պատշաճին ամե_նայն թեմական դպրոցաց իբրև սկզբունք կանոնա_գրութեանց նոցին։

կամ զհինգ անձինս և առաւել քան զերկոտասան, որք հմուտ իցեն տնտեսական և հաշուատուական կառավարութեան։ Ի հոգաբարձութեան գտանիցին և ուսումնական եկեղեցականք։

5) Հոգաբարձութիւնք ընտրին ըստ առաւելութեան ձայնից պատգամաւորաց ընտրելոց յեկեղեցականաց և 'ի ժողովրդոց։ Հաստատութիւն նոյնպէս և արձակումն հոգաբարձուաց լինի 'ի Վեհափառ Կաթողիկոսէն ըստ առաջարկութեան Թեմական Առաջնորդին։

6) Հոգաբարձուք ընտրին յիւրաքանչիւր երիս ամս. բայց եթէ առաջնոյն վկայեալ իցէ 'ի ժողովրդոց հաւատարիմ և արդիւնաւոր աշխատութիւն, կարեն մնալ յայնմ պաշտօնի այլ ևս ամս երիս ըստ տնօրէնութեան Թեմական Առաջնորդին։

7) Վճիռ ներքին և կամ արտաքին գործառնութեանց Ուսումնարանին լինի 'ի ներկայութեան մեծագոյն մասին Հոգաբարձուաց և ըստ առաւելութեան ձայնից։

8) Տուեալ լինի Հոգաբարձուաց 'ի վիճակային Ատենից ժապաւինեալ Տումար վասն ընդհանուր տարեկան մտից և ծախուց և վասն կամաւորնուիրատուութեանց բարեպաշտօն անձանց, և 'ի վերջ տարւոյն առաքին 'ի նկատողութիւն Ուսումնական Յանձնաժողովոյն։

9) Եթէ Թեմական Դպրոցք ունիցին զանշարժ կալուածս, զդրամագլուխ և կամ զայլ արդիւնս, Հոգաբարձութիւն կառավարեսցէ նոքօք զԴպրոցն. իսկ եթէ չիցեն այնպիսիք և կամ չբաւականասցին 'ի կառավարութիւնն Դպրոցին, յայնժամ Հոգաբարձութիւնն և Թեմական Առաջնորդն խնամ տարցին գտանել զայլ արդիւնս 'ի հարուստ ծնողաց աշակերտաց 'ի վարձ ուսման, յընծայաբերութեանց, 'ի կտակաց և այլն։

10) Հոգաբարձութիւնն ջանայ պայծառութեան Դպրոցաց, և յորդորէ զհամազգի եղբարս մտադիւր սիրով և յօժարութեամբ առաքել զմանկունս իւրեանց 'ի Դպրատուն։

11) Հոգաբարձուք երկիցս գոնէ յեօթնեկի վերահասու լինին անձամբ յառաջադիմութեան Դպրոցին, աշխատասիրութեան ուսուցչաց և աշակերտաց։

12) Պարտ է գիտութեամբ Հոգաբարձուաց ընդունել զաշակերտս 'ի դպրատուն. նոյնպէս և արձակումն թէ վարժապետաց և թէ աշակերտաց կախի զնոցունց նկատողութենէ։

13) Շինուածք Դպրոցաց պարտին լինել մերձ առ Եկեղեցիս կամ 'ի սրահս Եկեղեցեաց. և եթէ չգտանիցի յարմարագոյն ինչ տեղի անդանօր, մարթ է կառուցանել զայն յայլում վայրի։

## ԳԼՈՒԽ Բ.

### ՏԵՍՈՒՉՔ ԵՒ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ ՆՈՑԻՆ.

1) Տեսուչն պարտի լինել այր հմուտ ամենայն առարկայից ուսանելոց 'ի Թեմական Դպրոցի, վկայեալ 'ի վարս և բարեկիրթ, այլ և գիտակ միանգամայն և եղանակաց դասատուութեանց.

2) Տեսուչն ընտրի 'ի հոգաբարձուաց Թեմական Դպրոցաց և հաստատի 'ի Թեմական Առաջնորդաց.

3) Տեսուչն պարտի որոշել զդիւրագոյն եղանակ դասատուութեանց և հոգտանել անընդհատ շարունակութեան դասուց.

4) Յիւրաքանչիւր եօթնեկի պարտական է քննել զօրագրութիւնս Վարժապետաց զյառաջադիմութենէ աշակերտելոց, և զերևեալ թերութիւնս առժամայն պարտի հաղորդել վարժապետաց և աշակերտաց.

5) Տեսչին հարկ է պատուիրել զվարժապետս 'ի վերջ իւրաքանչիւր ամսոյ կազմել զառանձին ցուցակ զյառաջադիմութենէ աշակերտաց, նշանակելով 'ի նմին զթուանշանս աշխատասիրութեան, վարուց և յառաջադիմութեան աշակերտաց, զթիւ դասատուութեանց և զհամառօտ բովանդակութիւն իւրաքանչիւր առարկայից, զորս ուսուցեալ իցեն վարժապետք յընթացս ամսեան.

6) 'Ի կատարած իւրաքանչիւր ամի զկնի հարցաքննութեան Տեսուչն առաքէ առ Ծնողս զհամառօտ ցուցակ յառաջադիմութեան աշակերտաց յուսմունս և 'ի բարի վարս.

7) Տեսուչն 'ի տարին միանգամ պարտի պատուիրել վարժապետաց առնել զհրապարակական հարցաքննութիւն աշակերտաց 'ի ներկայութեան Հոգաբարձուաց, և առ հասարակ ամ ժողովրդականաց, որք ցանկան ներկայ գտանիլ անդ, առ 'ի ցուցանել զաստիճան յառաջադիմութեան Դպրոցին.

8) Տեսուչն ունի իրաւունս խորհրդակցութեամբ Հոգաբարձուաց Դպրոցաց ըստ յառաջադիմութեան աշակերտելոցն 'ի նոսին յաւելուլ զթիւ դասատանց և ուսանելի առարկայից.

9) Վարձատրութիւն Տեսչաց վասն հաւատարիմ և արդիւնաւոր պաշտօնակատարութեան ըստ առաջարկութեան Հոգաբարձութեան լինի 'ի Վեհափառ Կաթուղիկոսէ ըստ զօրութեան յայտարարութեան Ռուսական Յանձնաժողովյն.

## ԳԼՈՒԽ Գ.

### ՅԱՂԱԳՍ ՎԱՐԺԱՊԵՏԱՑ

1) Վարժապետք լինիցին ուսեալք, բարեկիրթք, ողջամիտք 'ի հաւատս, աշխատասէրք, և օրինաւոր, թղթովք վկա-

եալք ։ Իսկ եթէ չունիցին զդպրոցական վկայագիր, պարտին քննիլ ՚ի Տեսչէն ։

2) Վարժապետք ՚ի նշանակեալ ժամու գան ՚ի դասատուն և միջոց դասատուութեան կախի զտնօրէնութենէ Տեսչին ։

3) Վարժապետք յՈւսմնական մասին պարտին առնուլ Տեսչէն և ըստ նորայն խորհրդոյ ընթանալ յեղանակս դասատուութեանց ։

4) Եթէ տկարասցի մի ՚ի վարժապետաց, պարտի փութով ազդ առնել Հոգաբարձութեան. և եթէ երկարեսցի հիւանդութիւնն աւելի քան զմի ամիս՝ Տեսչն խորհրդով Հոգաբարձուաց կարէ նշանակել ՚ի տեղի նորա զայլ արժանաւոր անձն ։

5) Վարժապետք անաչառապէս և անկողմնասէր ոգւով մի օրինակ աւանդեսցեն առ հասարակ ամենայն աշակերտաց զդասատուութիւնս նշանակեալ լեզուաց և առարկայից առանց խտիր ինչ դնելոյ ՚ի նոսա ։

6) Մին ՚ի վարժապետաց վարէ նաև զպաշտօն վերակացուի Դպրոցին ըստ յարմարադատ նկատողութեան Տեսչին՝ ընդունելութեամբ առանձին ռօճկի վասն այնր պաշտօնի ։

7) Վարժապետք ՚ի վերջ իւրաքանչիւր ամսոյ ընդունին զռօճիկս իւրեանց ՚ի Հոգաբարձուաց ։

8) Իւրաքանչիւր ամիս միանգամ վարժապետք նախագահութեամբ Տեսչին ժողովին յաղագս խորհելոյ զկարօտութենէ դասական գրեանց, զեղանակաց դաստիարակութեան և զայլոց Ուսմնական պիտոյից Դպրոցին ։

## ԳԼՈՒԽ Դ.

## ՎԱՍՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ.

1) Աշակերտք ընդունին ՚ի Դպրոցն ըստ գիտութեան Հոգաբարձուաց երկիցս ՚ի տարին ՚ի 1 յունվ. և ՚ի 1 սեպտ ։

2) Յանկացողք յաշակերտաց մտանել ՚ի Թեմական Դպրոցն պարտին գիտել զուղիղ ընթերցանութիւն և վայելչագրութիւն չափաւոր, որոց հասակ չ՚լինիցի պակաս քան զ11 ամն և ոչ աւելի քան զ12 ։

3) Աշակերտք Թեմական Դպրոցաց են առ հասարակ երթևեկողք ։

4) Թիւ աշակերտաց լինիցի ըստ ընդարձակութեան Դպրոցին և ըստ տնօրէնութեան Հոգաբարձուաց ։

5) Աշակերտք գոնէ ՚ի կիւրակամուտս, ՚ի կիւրակէս և յաւուրս տօնից պարտին գնալ յեկեղեցի ։

6) Որդիք աղքատ ծնողաց ընդունին ձրիաբար զթուղթ, զգրիչ, զթանաք և երբեմն ըստ տնօրէնութեան Հոգաբարձուաց զգրեանս, եթէ ներեսցեն դրամական արդիւնք Դպրոցին ։

7) Աշակերտք զկնի աւարտելոյ զուսումն իւրեանց՝ ընդունին զօրինաւոր վկայական ՚ի հոգաբարձութենէ դրոշմամբ կնքոյ Դպրոցին և ստորագրութեամբ տեսչին և վարժապետաց։

8) Աշակերտք որք ունին զդպրոցական վկայագիր վասն յառաջադիմութեան և բարի վարուց, կարեն մտանել ՚ի պաշտօն ուսուցչութեան յազգային Ուսումնարանս, և ՚ի ցանկալ նոցա ընդունել զկոչումն Հոգևորականութեան, Հոգևոր իշխանութիւնն յարգէ զվկայագիրս նոցին։

## ԳԼՈՒԽ Ն.

### ՑԱՆԿԱԳԻՐ ՈՒՍԱՆԵԼԻ ԱՌԱՐԿԱՅԻՑ.

Ուսանելի առարկայք են այսոքիկ

#### յԱռաջին Դասատան

ա. Ընթերցանութիւն սուրբ Աւետարանի, կրթութեամբ ՚ի գրաբառէ աշխարհաբառ.
բ. Առաջին մաս Քերականութեան Հայոց,
գ. Առաջին մաս Թուաբանութեան,
դ. Համառօտ Սրբազան Պատմութի.
ե. Ընթերցանութիւն և գիր Ռուսաց լեզուի.
զ. Երգեցողութիւն.

#### յԵրկրորդ Դասատան

ա. Քրիստոնէական Վարդապետութի.
բ. Երկրորդ մաս Քերականութեան Հայոց.
գ. Երկրորդ մաս Թուաբանութեան.
դ. Համառօտ Ազգային Պատմութի.
ե. Աշխարհագրութիւն ընդհանուր համառօտ դասախօսութեամբ.
զ. Ընդհանուր Պատմութիւն համառօտ դասախօսութեամբ.
է. Ուղղագրութիւն հայերէն յաշխարհիկ բարբառ անսխալ.
ը. Սկզբնական կանոնք Քերականութեան Ռուսաց և զրուցատրութի հանդերձ թարգմանութեամբ։
թ. Գաղղիացւոց լեզու և վայելչագրութիւն.
ժ. Երգեցողութիւն։

#### յԵրրորդ Դասատան

ա. Ընդարձակ Քրիստոնէական վարդապետութիւն ճառօրէն դասախօսութեամբ և բացատրութեամբ էական մասանց հաւատոյ.
բ. Գրականութիւն Հայոց.
գ. Ճարտասանութիւն.
դ. Լուծմունք Թուաբանական խնդրոց և քաղուածք.
ե. Ազգային Պատմութիւն ընդարձակ դասախօսութեամբ.
զ. Պատմութիւն ընդհանուր ազգաց ընդարձակ դասախօսութեամբ.
է. Աշխարհագրութիւն ընդհանուր ընդարձակ դասախօսութեամբ.
ը. Ուղղագրութիւնք և Թարգմանութիւնք ՚ի Ռուս լեզու.

Թ. Ընտիր շարադրութիւն ՚ի գրոց բարբառ Հայոց.

Ժ. Արթութիւնք Գաղղիերէն լեզուի.

Ժա. Երաժշտութիւն։

---

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## Վեհափառ տէ՛ր և Աստուածընտիր՝ Քահանայապե՛տ

«Շնորհաւոր ծնունդ եւ մկրտութիւն Քրիստոսի»

Արփին երկնաձեմ և Արուսեակն զուարթարար և անստեղծ ծագեցաւ ՚ի ստորին վայրս երկրի, ծոցածին Անդրանիկն Հօր, ծագելով զլոյս Աստուածութեանն յաշխարհի, որ յանկերպարան գրութեան անդ ՚ի հանրածաւալ խաւարին արտափայլեաց զլոյն ստեղծական։

Ահա տօնէ Եկեղեցիս սուրբ և զաւարճական տնօրէնութեանն խորհուրդ անքննին էութեան զԱնպարագիրն ըղկերպարան ծառային իւրոյ զգեցեալ տեսանելով, և երկնահաղորդ զխրա և զմխոթուցեալ յերկինս առ հիացումն և առ ՚ի խորութիւն անհասութեանն Աստուծոյ՝ զուարթնոցն ուսեալ զօրհներգական փառաբանութիւն և պաշտեալ ՚ի նմին նախայաւիտեան անհասութենէն վերաձայնէ "Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ"։ Յայն ակնարկեալ յաւետարանութիւն զուարթնոցն, որ զպատգամն երկնային յունկն խօսէր ամենամաքուր սրբուհւոյ Կուսին, թէ յարդարելով Հոգւոյն Սրբոյ լինելոց ես տաճար Որդւոյն Աստուծոյ, առ այն՝ ըստ որում գալոց էր Փրկիչն աշխարհի, յայցելութիւն արարածոց իւրոց։

Եւ ահա եկն յերկիր Տէրն երկնի և երկրի ծնանելով ՚ի սրբոյ Կուսէն, զի զծնունդն հողեղէն արտաքսեսցէ ՚ի մարդասիրութիւն իւր ՚ի գերագոյն վիճակ երջանկութեան իւրոյ այցելութեամբ Աստուածութեանն, և պատելով ՚ի խանձարուրս՝ զխանձարուրն մահու պատեալ զանմահութեամբն մարդոյն՝ պատառեաց ՚ի ծուէնս, զի թագաւորեսցէ անմահութիւնն։ Եդաւ ՚ի մսուր անշունչ, որպէս անասուն և տարաշխարհիկ, և որպէս թագաւոր փառաց զհրեշտակս իջոյց ՚ի փառաբանութիւն, և զթագաւորս շարժեաց աստղագուշակ տեսլեամբ յԱրևելից գալ յերկրպագութիւն իւր։ Ծնաւ իբրև մանուկ առօրեայ, որ ոչ թուով ամաց չափի, և որ արար զժամս և զժամանակս, զի զմանկութիւնն անմեղ ՚ի ցոյց կատարեալ մարդկութեանն վերբերեսցէ, զի մանկացեալ ՚ի մեղս փրկեսցէ արեամբ իւրով որդիք արքայութեանն լինիցին։

Մկրտեաց զմանկութիւն որպէս զանմեղութիւն, զի ժողովեալ յԱստուածային գիրկս իւր զնոսա՝ քարոզեսցէ նոքօք զարքայութիւնն նորոյ Իսրայելի, ծնանիլ ՚ի հեթանոսութենէ ՚ի Քրիստոնէութիւն, և մտանել յօթեւանս փառաց Հօրն երկնաւորի. մանկանալ վասն աշխարհի. և հաստիլ յայր զօրութեան